



PRINT POST APPROVED 100003099 Published by AGBU Sydney

Խ. SUՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ - ՄԱՐS 2025


XL YEAR - NEW VOL. - MARCH 2025



Գերաշնորհ Տէր Վարդան Եպս. Նաւասարդեան Աւստրալահայ գաղութի խնդրանքառաջարկով և Ամենայն Հայոց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի բարեխնամ կարգադրութեամբ նշանակուած է Աւստրալիոյ և Նոր Ջելանտայի Հայոց Թեմի Առաջնորդ։ Բարի Գալուստ մեր նորանշանակ առաջնորդին և մեր լաւագոյն մաղթանքները։

Վարդան Եպս. Նաւասարդեան նախապէս , կարձ ժամանակ մը ծառայած է գաղութէն ներս և ծանօթ հոգեւորական մըն է։ Նախքան թեմիս առաջնորդ նշանակուիլը, Պալթեան երկիրներու բարեխնամ առաջնորդն էր ,կեդրոնատեղի ունենալով Լաթվիոյ մայրաքաղաք Րիկան, և որպէս Աթոռանիստ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին։

His Eminence Bishop Vardan Navasardyan is appointed by His Holiness Catholicos of all Armenians Karekin the second as the new Primate of Australia and New Zealand Armenian Dioceses: Bishop V. Navasardyan prior to his appointment was the Primate of the Baltic States, residing in the capital of Latvia, Riga, at the Armenian church of S, Gregory the Illuminator. We welcome our new primate and wish him fruitful mission for the glory of the Armenian church and the community.





# UNUQUALTUL ZUBAB UNUSTULMAB UN UNT PELUUSUBM DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

Առաջնորդ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊՍ ՆԱՃԱՐԵԱՆ

ARCHBISHOP HAIGAZOUN NAJARIAN

**Primate** 

#### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻԻՆ

Սոյն հաղորդագրութեամբ կը տեղեկացնենք աւստրալահայ համայնքը, որ ՆՍՕՏՏ Գարեգին Բ., Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց թեմի Առաջնորդի թեկնածութեան համար Թեմական Խորհուրդին շնորհեց եռանուն ցանկ մը, որպէսզի Թեմական Խորհուրդը յարմարագոյն թեկնածուն ընտրէր որպէս թեմին նոր Առաջնորդ։ Այդ անուանացանկը կը ներառէր հետեւեայ հոգեւոր հայրերը.

Գերշ Տէր Նարեկ Եպիսկոպոս Պէրպէրեան – Առաջնորդ Պրազիլիոյ Հայոց Թեմին Գերշ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան – Առաջնորդ Պալթեան Երկիրներու Հայոց Թեմին։

Հոգշ Տէր Զաքարիա Ծայրագոյն Վարդապետ Բաղումեան – Ս. Էջմիածին

Հետեւելով Վեհափառ հօր խորհուրդին, ծանօթացման նպատակով, Նոյեմբեր եւ Դեկտեմբեր 2024-ին, Թեմական Խորհուրդը Աւստրալիա հրաւիրեց երեք թեկնածուները, որոնք պատարագեցին, հանդիպումներ ունեցան հոգեւոր հովիւներուն, ծխական խորհուրդի անդամներուն, երիտասարդներուն եւ աւստրալահայ համայնքի անդամներուն հետ։

Թեմական Խորհուրդը ունեցաւ պաշտօնական ժողովներ եւ խորհրդակցութիւններ երեք թեկնածուներուն հետ, նկատի առաւ քահանայ հայրերուն եւ չորս ծխական խորհուրդներու ատենապետներուն կարծիքներն ու տպաւորութիւնները, ապա, իր 23 Դեկտեմբեր 2024ի արտահերթ ժողովին, գաղտնի քուէարկութեամբ, միաձայնութեամբ ընտրեց Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանը որպէս Առաջնորդ թեմիս։ Ընտրութեան արդիւնքները անմիջապէս փոխանցուեցան Նորին Սրբութեան։ Վեհափառ Հայրապետը, իր 31 Յունուար 2025 թուակիր օրհնաբեր նամակով վաւերացուց եւ նշանակեց Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանը Առաջնորդ Աւստրալիոյ եւ Նոր Ձելանտայի Հայոց Թեմին։ յաւելեալ տեղեկութիւն կր փոխանցենք Վարդան Սրբազանի

Ապագայ հաղորդագրութեամբ Առաջնորդի հանգամանքով Աւստրալիա ժամանման, ինչպէս նաև յարակից այլ մանրամասնութիւններու մասին։

### Դիւան Աւստրալիոյ եւ Նոր Չելանտայի Հայոց Առաջնորդարանի 1 Փետրուար 2025

11 Chatswood Avenue, Chatswood NSW 2067– PO BOX 694, Chatswood NSW 2067 Australia Tel: 61-2-91614000– Email: primate@armenian.com.au

# Յունուար 26 – Աւստրալիա Օր 2025

Աւստրալիան՝ քաղաքական պաշտօնական առումով պաշտօնապէս ձանչուած է որպէս Հասարակապետութիւն Աւստրալիոյ (Commonwealth of Australia) բայց խօսակցական առումով և ընդհանրապէս պարզապէս ՝Աւստրալիա, տափարակ և չոր նոյնիսկ Անթարթիքային աւելի։

Աւստրալիան մեզի և միջազգային առումով , ծանօթ երկիր մըն է, որ միեւնոյն ժամանակ ցամաքամաս մըն է , որ կը նկատուի նաև ամենափոքրը Աւստրալիան կոչուած է նաև այլ անուններով, ինչպէս, ``ամենահին Ցամաքամաս``, ``Ցամաքներու վերջինը``( The last lands of lands), ``Վերջին Սահմանը``( The last frontier), ``Վարը դէպի Ներքեւ ( Down under) և այլ անուններով։

Այսօր նկատի առնելով աշխարհագրական դիրքը ծանօթ է նաև որպէս ՝՝Կղզիացած՝՝ երկիր և հեռու մնացեալ ամէն ինչէն։

Բնականաբար Աւստրալիան ինչպէս ծանօթ է աշխարհին համեմատաբար նոր երկիր կը նկատուի, ոչ անպայման նկատի ունենալով իր պատմական անցեալը , այլ հիմնուելով իր ներկայի քաղաքական , ընկերային , հասարակական և պետական կառուցուածքին և արդիականութեան և այն բոլոր հնարաւորութիւններուն որ կը տրամադրէ։ Աշխարհագրական հեռաւորութիւնը և կլիման ազդած են ժողովուրդի կենցաղին և վարուելակերպին վրայ ։

Ինչպէս յայտնի է, պատմականօրէն, մաս կազմած է Բրիտանական կայսրութեան, իսկ այժմ կը ներկայանայ որպէս Հասարակապետութիւն Աւստրալիոյ , որ համեմատաբար ազատ, անկախ և բարեբեր երկիր մըն է, Աւստրալիացիները բախտաւոր են նաև , այն իմաստով , որ դրացի երկիր չունին, այլ շրջապատուած են ովկիանոսներով։ Մինչեւ 20-րդ դարու սկիզբը նկատուած է համեմատաբար կղզիացած և դանդաղ, բայց 21-րդ դարուն շնորհիւ նաև ներգաղթին դարձած է միջազգային ուշադրութեան առարկան։

Աշխարհագրական այս ցամաքամաս երկիրը ըստ հնագիտութեան կրնայ 4.4 պիլիոն տարեկան ըլլալ։ Աւստրալիոյ բնիկ բնակիջները, որոնք ծանօթ են նաև իւրայատուկ մշակութային ժառանգութեամբ կը բաժնուին երկու հիմնական խմբաւորումներու իրենց ներքին ցեղային և լեզուական բաժանումներով՝Ապօրիձինի Աւստրալիացիներ և Թորէս Նեղուցի

(Torres Strait Islanders),որոնք շատ յաձախ կը յիշուին ,որպէս Աւստրալիոյ առաջին բնակիչներ։ Կը կարծուի որ ունին 65,000 տարուայ պատմութիւն և ըստ արձանագրութեան մինչև Եւրոպական գաղութատիրութիւնը ունեցած են 250 տարբեր խօսակցական լեզուներ։ 2021-ի մարդահամարով Աւստրալիացի բնիկ տեղացին կը կազմէ բնակչութեան 3,8 տոկոսը։

Ըստ պատմութեան ինչպէս յայտնի է Ճէյմըս Քուք , 1770.թին այս ցամաքամասը Բրիտանիոյ Ճորձ Գ. Թագաւորին անունով կը յայտարարէ Թագին պատկան հողամաս զայն առուանելով Նիւ Սաութ Ուէլս (NSW)։

Բնական է պատմական մանրամասնութիւններու մէջ պիտի չխորանանք և շատ հաւանաբար հատորներ պէտք ըլլան։

Աւստրալիան 1994 թուականէն սկսած է տօնել Յունուար 26-ը որպէս ազգային օր , և արձակուրդ, սակայն այդ օրերէն ասդին աւելցած է նաև ընդիմութիւնը և բողոքը, որ սկսաւ 1970 թուականէն ասդին պահանչելով որ օրը փոխուի կամ նոյնիսկ մոռցուի, շատեր զայն կ՛ուզեն վերակոչել և անուանել ՛՛Սուգի Օր՛՛ , կամ ՛՛Յարձակման Օր՛՛ և կամ նոյնիսկ ՛՛Վերապրումի Օր՛՛, սկզբնական շարժումին մասնակիցները Ապօրիձինիներ էին , սակայն աւելի ուշ ոչ ապորիձինիներ ևս միցան շարժումին։ Այս ամէնուն կողքին յիշեցնենք որ ՀԲԸՄ.ի Միտնիի Մասնաժողովը 1995-էն սկսեալ սկսած է տօնել Յունուար 26—Աւստրալիա Օր մասնաւոր յայտագիրով պատուելու համար օրուայ ՀԲԸՄ.ի Աւստրալահայը։

Գեղեցիկ սովորութիւն մը որ ահաւասիկ 25երկար տարիներէ ի վեր կը շարունակուի, սակայն ինչպէս այլ ձեռնարկներ տիրող համաձարակին պատձառով դադրած էր վերջին տարիներուն։

Այսօր Յունուար 26-ը խնդրոյ առարկայ է քաղաքական մակարդակով։ Յիշեցնենք որ Ապօրիձինիները ունին իրենց դրօշակը , ինչպէս նաև Թորէս Նեղուցի կղզիաբնակները, սակայն Ապօրիձինիներուն դրօշակը շատ աւելի ընդհարացած և ծանօթ է և նոյնիսկ կը տատանի Պետական շէնքերու վրայ, ինչպէս նաև Միտնիի յայտնի կամուրջին վրա։

Ընդիմադիր՝ ազատական կուսակցութեան պետ Փիթըր Տաթըն իր ընտրապայքարի յայտարարութիւններուն ընթացքին ըսած է՝ Եթէ ընտրուիմ կը խոստանամ ՝՝Դրօշակը՝ մերժել և երբեք առջեւը չկանգնիլ։ Յիշեցնենք նաև որ շատ յաձախ մարզիկներ իրենց յաղթանակը կը տօնեն պարուրուած Ապօրիձինի և Աւստրալիական դրօշակներով։

Ինչպէ՞ս կարելի է մտածել, որ երկիր մը , ինչպէս Աւստրալիան է, ունի կամ ունենայ երկու դրօշակ :Հաստատելու համար, ըսենք որ միջազգային համայնքին կողմէ և ամէն պետական պարագաներու Ապորիձինի դրօշակը յարգուած է բայց չէ ձանչուած։ Կայ շարժում որ Ապօրիձինի դրօշակը փոխարինէ ներկայ ծանօթ դրօշակին, որ ցոյց կու տայ նաև այն եղելութիւնը որ կայ շարժում որ Աւստրալիան դառնայ հանրապետութիւն (Republic Of Australia)։Ինչպէս յայտնի է նախապէս եղած է փորձ դառնալու հանրապետութիւն , բայց շարժումը հանրաքուէի միջոցով կորսնցուցած է առաջարկը և թագաւորականներ՝ շահած են։ Այսինքն ինչպէս երէկ այսօր ևւս Աւստրալիան ունի Սահմանադրական Թագաւորութիւն, այսինքն Անգլիոյ Թագաւորը կամ Թագուհին միեւնոյն ժամանակ կը ներկայանան որպէս Աւստրալիոյ պետութեան գլուխը, պարագան նոյնն է բոլոր մնացեալ Հասարակապետական Պետութիւններուն , ինչպէս Գանատա։

Այս ներքին երկուութիւնը կարելի չէ պատկերացնել Աւստրալիոյ պէս երկրի մը համար։ ժողովրդավարութիւն թէ ծայրայեղութիւն, կամ Խեղկատակութիւն։

Երկուութիւներ միշտ եղած են և կամ քարոզխօսութիւններ, բան մր որ ներկայ է նաև մեր համայնքեն ներս և ընդհանրապէս Հայութեան հետ։ Օրինակի համար իւրաքանչիւր Սուրբ Ծննդեան և Հրաշափառ սուրբ Յարութեան տօներուն, գաղութի կուսակցական, միութենական ղեկավարներ, ներկայացուցիչներ կր հաւաքուին Առաջնորդարանի կամարներուն տակ ողջունելու և շնորհաւորելու թեմի Առաջնորդը, ընդհանրապէս ելոլթ ունեցողները ``Միասնականութեան ,Համերաշխաութեան և Համագործակցութեան կ`անդրադառնան մասին, լաւ և սքանչելի մօտեցում, բայց հազիւ Առաջնորդարանի կամարներուն տակէն հեռացած խօսթը գործի վերածուելու երեւոլթէն շատ հեռու է ։ Օրուալ իրականութիւնը համայնքէն ներս հեռու է համերաշխ կամ համագործակցական ըլլալէ։ խօսքը չէ այլ գործն է անմահ։ Որպէս ժողովուրդ ունինք երկու լեզու , երկու Առաքելական Աթոռ, մեր սրբազան Արարատ լեռն անգամ,ունի երկու գագաթ։ Ժամանակ մր առաջ ունէինք երկու հայրենիք, կորսնցուցինք Բենիամինը, իսկ եթէ այսպէս շարունակենք , կը կորսնցնենք նաև Անդրանիկը։ Լեզուն Գրեթէ կորսուած է , Արեւմտահայերէնը դասուած է մեռնող լեզուներու *շ*արքին , Իսկ Արեւելահայերէնը այնքան օտարաբանութիւններով լեցուն է, որ սփիւռքահայր ի վիձակի չէ հասկանալու ոչ՝ խօսուածը և ոչ՝ ալ գրուածը։ Ինչպէս կարելի է հիւանդին(Արեւմտահայերէն) պացիէնթ (արեւելահայերէն) րսել , օրինակները շատ են։ Պէտք է հասկնալ թէ ո՞վ է հիւանդր և ի՞նչ է հիւամդութիւնը և եթէ այսպէս շարունակուի շատ հաւանաբար հիւանդր(Պացիէնթը) դառնալ մահամերձ։

ՀԲԸՄ.ը առաջին օրէն իր գործով եղած է օրինակ և կը շարունակէ իր այդ հայրենասէր և նուիրեալ ծառայութիւնը Ի Հաւյաստան և ի Սփիւռս աշխարհի, որուն իր բաժինը կը բերէ նաև ՀԲԸՄ.ի Սիտնիի մասնաձիւղը։ Այո՛ կը խոստովանինք որ Սիտնին փոքր ածու մըն է ՀԲԸՄ.ի հսկայ մրգաստանին մէջ, բայց պտուղները՝ արեւահամ։ Կարձ ժամանակ մը համաձարակին պատձառով ածուն մնացած էր անտեսուած ինչպէս շատ մը այլ հաստատութիւններ միջազգային մակարդակով ։

2024 թուականէն ասդին Միտնիի ՀԲԸՄ.ը վերակազմուած է , այսօր գործօն է Նաև ՀԲԸՄ.ի Երիտասարդ Արհեսատավարժները, իսկ այս տարի՝2025 թուականին կը պատրաստուի տօնել ՀԲԸՄ.ի Ալեքսանտր վարժարանի 35 ամեակը։

Յունուար 26 – Աւստրալիա Օր 2025 թուական։

ՀԲԸՄ.ի Սիտնիի մասնաձիւղը հաւատարիմ իր աւանդութեան այս տարի դարձեալ Մեծ շուքով նշեց կաձ դադարէ մը ետք Աւստրալիա Օր հանդիսութիւնը իր կեդրոնատեղիին մէջ Կ.Վ. ժամը 3-ին։ հանդիսութիւնը կը հովանաւորէր Թեմիս Բարեխնամ առաջնորդ՝Գերշ. Տէր Հայկազուն Արք.պս Նաձարեան։

ՀԲԸՄ.ի կեդրոնատեղին կարծես մեղուանոց էր և իւրաքանչիւրը կը փորձէր իր տեղը գտնել։ Վարչութեան քարտուղար Քրիսթին Աբիկեան կը փորձէ ներկաներուն ուշադրութիւնը գրաւել , որ սկսին օրուայ հանդիսութիւնը։ Վերջապէս իր բարի գալուստի խօսքերով համելի ժամանց կը մաղթէ բոլորին և կը ներկայացնէ օրոայ գեղարուեստական յայտագիրը։

Իսկապէս համելի էր տեսնել մեր ՝՝Անպակաս՝՝ և միշտ բարհամ Մայգըլ Աղաբէկեանը բեմին վրայ, որ ստեղնաշարի վրայ մեր կարօտը հագեցուց և համելի նուագով մեզի փոխանցեց այն զգացումը թէ անցնող ժամանակը կարծես երէկ էր ։

Զէլա Մարկոսեանի ելոյթը ոչ միայն անակնկալ էր բայց հաձելի էր կրկին անգամ միանալու մեր մշակոյթին ու ազգային երգին ու ձայնին Զելայի մատներուն հետ։

Անակնկալը շարունակուեցաւ երբ բեմ բարձրացաւ Բեմի անունով ՝՝Չարլի Չէչ՝՝ բայց աւազանի անունով Չարլի ՉէչՃէնեան, թոռնիկը մեր ազգայիններէն Տէր և Տիկին Վարուժան և Սօնա ՉէչՃէնեաններուն։ Անակնկալներու շարքին ներկաները իմացան որ ՀԲԸՄ.ի Վարչութեան Նախկին Ատենապետ և երկարամեայ վարչական Տէր և Տիկին Արամ և Ալիտա Յակոբեաններու ամուսնութեան 50-րդ տարեդարձն է։ Այս առիթով եղան շնորհաւորանքներ իսկ Չարլի Չէչ իրենց նուիրեց Ազնաւուրի ծանօթ երգերէն ՝՝ՆԱ, ՏΗΕ՝՝ երգը։ Բայց ընդհանուրին խնդրանքին ընդառաչելով երգեց ՝՝ԳԱՐՈՒՆ ԳԱՐՈՒՆ Է՝՝։

Երգին բառերուն հետեւելով՝ *Չար լեզուներին հաւատաց իմ եարը, արցունքներով լցրեց սեւ ,սեւ աչերը*՝ Կը մտածէի մենք ալ որպէս ժողովուրդ , չար լեզուներուն շատ հաւատացած ենք և արցունքէն շատ աւելին կորսնցուցած։ Այո՛ բառին իմասդով պէտք է համագործակցինք և համերաշխաբար աշխատինք ի շահ մեր հայրենիքին, այն փոքր ածուին որ Մովսէս Խորենացի կը նկարագրէ։ Աշխարհը տեղաղարժ աւազի նման ամէն վայրկեան փոփոխութեան մէջ է և ոչ թէ տարիներու երկարութեամբ։ Ահազանգը շատոնց հնչած է արթննալու ժամանակն է։

Սիտնիի ՀԲԸՄ.ի նորակազմ Տիկնաց Յանձնախումբը , որ կը նախընտէ կոչուիլ ՝՝Ընկերային Խումբ՝՝ զարդարած էին սեղանները , Ճաշերու առատութիւնը ցոյց կու տար հայ կնոջ խոհանոցային հմտութիւնը և սէրն ու նուիրումը այն ինչ ազգային է։

Հանդիսութեան ընթացքին օրուայ ՀԲԸՄ.ի տարուայ Աւստրալահայերը՝ Տիար Յակոբ (ԺԱԳ) Գաբթէրեան և Տիար Արթօ Գարակէլինեան ստացան իրենց համպատասխան գնահատականները։ Գարակէլինեանի և Գաբթէրեանի մասին Քրիտին Աբիկեան տուաւ յաւելեալ տեղեկութիւններ և անձնական շփումներ որ ունեցած է ։ Վարչութեան կողմէ Տէր և տիկին Գաբթէրեաններուն շնորհուեցաւ ՀԲԸՄ.ի ցկեանս անդամութիւն, իսկ Առաջնորդ սրբազան հօր՝ Գերշ. Տէր Հայկազուն Արք,պս Նաձարեանին ՀԲԸՄ.ի պատուոյ անդամութիւն ։Բնականաբար սրբազան հայրը իր շնորհակալութիւնը յայտնեց այս պատիւին համար և միութեան և վարչութեան մաղթեց լաւագոյնը։

Տիար Վ. Իսկէնտէրեան փափաքեցաւ խօսք առնել, Իսկէնտէրեանի գլխաւոր պատգամը ՝՝Չմոռնալ անցեալը եւ Մեզմէ բաժնուած ՝՝ ազգայինները ։ Ինքը անձամբ յիշեց Տեարք Զաւէն ՉէչՃէնեանը և Սարգիս Պօղոսեանը և իրենց ներդրումը։

Խօսք առաւ ժիզէլ Գաբթէրեան որ դոստրն է Ժագ Գաբթէրեանի, որ հօր և մօր կողմէ

շնորհակալութիւն յայտնեց վարչութեան անդրադառնալով ծնողքին նուիրումին և սիրոյ

մասին։ Ժիզէլ Գաբթէրեան անդամ է Աւստրալիոյ ազատական կուսակցութեան և յառաջիկայ Հասարակապետական ընտրութիւններուն Պրատֆիլտ ( Bradfield) շրջանի ընտրապայքարի թեկնածուն է։ Ապագայ Խոստումնալից քաղաքագէտ։

Ինչպէս միշտ Սրբազան հօր , ՀԲԸՄ.ի ատենապետ՝ Միհրան Լէփէմեանի , վարչականներու և պատուոյ աւստրալահայերուն հետ հատուեցաւ օրուայ կարկանդակը և բաժնուցաւ ներկաներուն։ Եղան սրտաբուխ նուիրատուութիւններ։

Անգամ մը ևս կը շնորհաւորենք ՀԲԸՄ.ի տարուայ աւստրալահայ արժանաւորները և Միութեան կը մաղթենք նորանոր լաջողութիւններ բեղուն գործունէութեամբ։







ՅԲԸՄ.ի Աւստրալահայերը `Պարոնայբ Ժագ ԳաբթԷրեան և Արթօ ԳարակԷլինեան Առաջնորդ Սրբազան հայրը կը ստանայ իր ՅԲԸՄ.ի Պատուոյ անդամութիւնը











Օրուայ լուսանկարները տրամադրուած են Յերման Մահմուրի կողմե

ժիզէլ Գաբթէրեան

# Հայաստանի Մէջ 2025-ի Յունուար 1-ի Դրութեամբ Կան 123 Կուսակցութիւն

Հայաստանի մէջ 2024 թուականի Դեկտեմբեր 31-ի դրութեամբ կան գրանցուած (հաշուառուած) մասնաւորապես 123 կուսակցութիւն, 63 կրօնական կազմակերպութիւն, 1797 հիմնադրամ, 3907 հասարակական կազմակերպութիւն, 213.140 անհատ ձեռնարկատէր, 100.066 Մահմանափակ պատասխանատուութեամբ ընկերութիւն, 3156 Փակ բաժնետիրական ընկերութիւն։ Այս մասին civic.am-ը տեղեկացաւ ԱՆ իրաւաբանական անձերու պետական արձանագրութեան հրապարակած 2024 թուականը ամփոփող հաշուետուութենէն։ 2024 թուականին, ըստ պետական արձանագրութեան, գրանցուած են 8 կուսակցութիւն, 445 հասարակական կազմակերպութիւն, 104 հիմնադրամ, 25.842 անհատ ձեռնարկատէր, 8381 ՄՊԸ, 112 ՓԲԸ։ Նախորդ տարի կրօնական եւ որեւէ կազմակերպութիւն չէ գրանցուած։

Նշենք, որ 2024-ին գրանցուած եւ ընդդիմադիր դաշտին մէջ դիրքաւորուած են

մասնաւորապէս Ռուսաստանի մէջ փախստականի կարգավիճակով հանգրուանած «ԴԱՀԿ-ի Միհրանի» Միհրան Պօդոսեանի «Հայոց համազգային միասնութիւն»-ը, նախկին քաղաքապետ Հայկ Մարութեանի «Նոր ուժ»-ր, Ռուսաստանի մէջ ծուարած մէկ այլ պաշտօնեայ՝ պաշտպանութեան նախարար նախկին Արշակ «Համահայկական Կարապետեանի ձակատ»-ը, արտերկրի մէջ գտնուող Ղուկասեանի ԴОԿ-n Վարդան



Դեմոկրատիա, Օրէնք, Կարգապահութիւն կուսակցութիւնը։

#### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

«Աւստրալիա օր» Տօնակարութեան ուրախ առթիւ ՀԲԸՄ-ԻՆ

Տիար թորոս Պօղոսեան 300 տոլար Տիկին Մարօ Խոհարարեան 100 տոլար Տիկին Վարդիթեր ներսէսեան 100 տոլար Տիկին Արշօ Պլութեան 100 տոլար Տիար Նուպար Ղարիպեան 100 տոլար Տիկին Սիրվարդ Էլմասեան 50 տոլար

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ողբ. Սիրան Գասապեանի մահուան տխուր առթիւ Տիկին Մարի ՉէչՃէնեան 50 տոլար

#### Առ ի քաջալերանք ՀԲԸմ-ին

Տէր և տիկին Գէորգ և Սօսի Պօղոսեան 100 տոլար



# COMMUNITY WELFARE CENTRE

We provide a range of services that cater to various demographic groups in the community.

Some of our services are funded by the Department of Health under the Commonwealth Home **Support Programme** 

ACWC is a Not-for-Profit Organisation and a Public Benevolent Institution and has endorsement as a deductible gift recipient.

10 Macquarie Street, Chatswood NSW 2067 www.armenianwelfare.com.au

#### SOCIAL SUPPORT GROUP

This support is provided to people aged 65+, these structured activities are provided in a group-based environment and designed to develop, maintain and support social interaction and independent living.

Tuesday, Wednesday, Thursday and Friday 9:30am to 1:30 pm Edgarian Hall, Chatswood.

Monday and Friday 9:30am to 1:30 pm Batmanian Hall, Wentworthville.

Monthly Group Excursions are conducted by the Centre's staff.

#### SOCIAL SUPPORT INDIVIDUAL

Visiting services, telephone and web-based monitoring, accompanied activities such as shopping and Dr appointments.

#### CENTRE BASED RESPITE

Tuesday, Wednesday, Thursday and Friday 9:30am to 1:30 pm Edgarian Hall, Chatswood.

#### DOMESTIC ASSISTANCE

General house cleaning, linen services, unaccompanied shopping.

#### TRANSPORT SERVICES

Direct transport services where the trip is provided by a worker or a volunteer.

#### **MEALS SERVICES**

Meals prepared and delivered to the client's home.

#### FLEXIBLE RESPITE

We provide quality respite care for frail aged people, so that the carers can take a break.

We also assist with referrals to My Aged Care, to other organisations and services that are best suited to you.

#### CONTACT

O2 9419 6394 | 0402 818 421



welfare@armenian.com.au



@ACWCNSW

# 名M Funerals

Serving the Armenian community with dignity, compassion & excellence

### We will always answer your call to help

# Ello Meguerditchian

m | 0405 675 571

ph | 1300 076 100

e | ello@emfunerals.com.au

Office address (by appointment) Suite 7, Level 1, 174 Willoughby Road Naremburn NSW 2065



Սիտնիի Յայ գաղութի կողմէ ճանչցուած **Էլօ Մկրտիչեանը** պատրաստ է լաւագոյնս օգտակար հանդիսանալու թաղմանական ամբողջական ծառալութեան սպասարկութեան

Personalised, professional service • Burial or cremation services • Complimentary concierge service Repatriation of remains • Fluent in English and Armenian languages • All cultures

#### For your peace of mind, ask about our Pre-Paid Funerals\*

3 years interest-free payment plan available \*For funeral services only, burial plots not included

emfunerals.com.au

Umpun, March -2025

# Ս. ՄԱՐԳԻՄ և Մ. ՎԱՐԴԱՆԱՆՔ

#### Ս. ՍԱՐԳԻՍ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ԵՒ ՍԻՐՈ Ց ԲԱՐԵԽՕՍ

U. Սարգիս Զօրավարի տօնը Հայաստանի մէջ ընդունուած է նշել ոչ միայն եկեղեցական <u>ծէսով</u>, աղօթքով, այլեւ ժողովրդական սովորութիւններով, որ հայ ժողովուրդին համար նուիրական ավանդութիւն է։ U. Սարգիս զօրավարը երիտասարդներու արագահաս բարեխօսն է։ անոր միջնորդութեամբ հրաշքներ տեղի կ՛ունենան։ Այդ օրը երիտասարդները կ՛աղօթեն Սուրբին, որ իրենց աղօթքները հասցնէ առ Աստուած։ U. Սարգիսը սիրոյ երազանքը իրականացնող Սուրբ է։ U. Սարգսի մասին բազմաթիվ ավանդապատումներ կան։ Ահավասիկ դրանցից մեկը։

Աղքատ Աշուղ Ղարիբը կը սիրէր մեծահարուստի աղջիկ մը՝՝ Շահ-Սանամին։ Վերջինս եւս կը Միրէր զինք, բայց Աշուղը աղքատ էր, եւ աղջկան հայրը կ<sup>′</sup>արգիլէր որ ամուսնանան, քանի որ միտք ունէր աղջկան կնութեան տալ մեծահարուստի մր։ Աշուղ Ղարիբը կ՛որոշէ մեծ կարողութիւն կուտակելու համար երթալ օտարութիւն՝ աշխատելու։ Սակայն մինչեւ այդ Աշուղ Ղարիբը իր սիրած աղջկալ կողմէն խոստում կը ստանալ՝ եօթ տարի սպասել իրեն։ Պայման կր դնէ, որ եթէ ուշանալ թէկուզ մէկ օր , աղջիկը թող ամուսնանալ հօր ցանկությամբ։ Այդ եօթ տարիները շատ դժուար կ՛անցնին Աշուղ Ղարիբի համար։ Զրկուած էր իր գեղեցկուհին տեսնելու առիթէն, որեւէ լուր չունէր նրա մասին, սակայն չէր յուսահատէր, այլ կարօտով կը սպասէր այն օրուան, երբ դարձեալ կը կը հանդիպին, ընտանիք կը կազմեն եւ ամբողջ կեանքը միասին կ՛ապրին։ Եօթ տարի շարունակ գիշեր ու ցերեկ՝ աշխատելով՝ Աշուղ Ղարիբը կարողութիւն կը ստեղծէ եւ տուն դարձի ձամբան կը բռնէ։ Հանապարհը լեցուն էր փորձանքերով եւ խոչընդոտներով։ կը թուէր , թէ Աշուղ Ղարիբը իր յոյսը պետք է կորսնցնէ, որ պիտի չհասնի իր սիրած էակին։ Նա ազնիւ սրտով եւ արդար մտքով կ<sup>՛</sup>աղօթէ Ս. Սարգիսին` խնդրելով արագահաս Մուրբի օգնութիւնը։ Մ. Սարգիսը, լսելով սիրահարուած Աշուղի աղօթքը, իր արագահաս ձերմակ նժոյգով բարձրացրած մրրիկի մեջ իսկոյն կը յայտնուի Աշուղ Ղարիբին եւ կր նստեցնէ ձիու գաւակին եւ մէկ ակնթարթի մէջ կր հասցնէ Շահ-Սանամէի մօտ։ Աղջկայ հայրը տեսնելով Աշուղ Ղարիբի կամքը, կատարուած հրաշքը, նրանց անկեղծ սէրն ու նուիրուածութիւնը, կ՛օրհնէ երկուքին միութիւնը։ Ժողովրդական սովորութիւններէն է նաեւ U. Uարգիսի տօնին նախորդող գիշերը երիտասարդներուն՝ <u>ադի բլիթ</u> ուտելը, որուն հետ կը կապեն իրենց փեսացուի կամ հարսնացուի երազայայտնութիւնը։ Այդ օրը լիշատակելի սովորութիւններէն է նաև փոխինդով «Ալիւր»մատուցարանը դնել տան տանիքին կամ պատշգամբին եւ սպասել Ս. Սարգիս զօրավարի ձիու պայտի հետքին։ Ըստ ավանդութեան` Ս. Սարգիսը պետք է հրեշտակներու ուղեկցութեամբ անցնի եւ որու որ մատուցարանի մէջ դրուած ալիւրի կամ փոխինդի մեջ ձգէ իր սպիտակ (մաքրութիւն, անաղարտութիւն խորհրդանշող) ձիու պայտի հետքը, այդ տարի կ՛իրականանայ երիտասարդի երազանքը։ Սիրահարուած երիտասարդները տօնին աոթիւ իրարու բացիկներ եւ քաղցրավենիք կր նուիրեն։

Soup Արեւմտեան աշխարհի սովորութիւններէն Կր համապատասխանէ Valentines Day –ին

Տօնը հաւասարապէս ծնունդ առած է քրիստոնէական արմատէ, երբ հաւատացեալներ կը տօնէին համանուն սուրբի `Սուրբ Վալէնթինի տօնը, որ աւելի ուշ վերածուեցաւ հիմնական մշակութային, վաձառականական սիրոյ արտայայտութեան որ այսօր տարածուած է շատ մը երկիրներու մէջ։



# վարդանանբ

**451** թուականի մայիսին, **Աւարայրի ճակատամարտին** հայրենիքի, հայ եկեղեցուոյ եւ քրիստոնէական հաւատքի պահպանման համար նահատակուած Վարդանանք ու **1036** մարտիրոսները <u>Յայաստանեայց Առաբելական Եկեղեցու</u>ոյ մեծագոյն սուրբերու շարքին կը դասուին ։ Իրենց նահատակութեամբ անոնք հաստատեցին հայ ժողովրդի ապրելու կամքը եւ լինելիութեան իրաւունքը, որ կը շարունակուի մինչեւ այսօր։


Հայաստանի մէջ քրիստոնէութեան հաստատման օրէն ի վեր Հայ Եկեղեցին սերտօրէն կապուած եղած է հայրենիքի պաշտպանութեան գործին։ Դրա վառ օրինակը Վարդանանց պատերազմն է։ Պարսից զօրքերու դէմ մղուած պատերազմին հայ մարտիկներու կողքին էր Հայոց եկեղեցին։ Յովսեփ կաթողիկոսի եւ <u>Դևոնդ Երեցի</u> առաջնորդութեամբ։ Մարտէն առաջ հայ հոգևորականները ոչ միայն կը քաջալերէին զօրքին Մակաբայեցիներու օրինակով, այլև <u>Մկրտութեան</u> և <u>Սբ. Պատարագի</u> խորհրդով աւելի ևս կ՛ամրապնդէին նուիրեալներուն հաւատքն ու ոգին։ «Եւ սեղան կանգնեցնելով՝ ամենասուրբ խորհուրդը կատարեցին, պատրաստեցին նաեւ աւազան, եթե զօրքի բազմութեան մեջ չմկրտուած մարդ կար, ամբողջ գիշերը մկրտեցին. եւ առաւօտեան Սբ. հաղորդութիւն ընդունեցին», – կը գրէ Եղիշե պատմիչը Վարդանանց պատերազմէն առաջ կատարուածի մասին։

Վարդանանց տօնին առիթով կը մատուցուի Սուրբ և անմահ պատարագ և ըստ մեր տեղի սովորութեան , պատարագին կը մասնակցին դպրոցական աշակերտները և կը ներկայացնեն գեղարուեստական յայտագիր Վարդանանց նիւթով։

Յիշեցնենք նաև որ Վարդանաց տօնին, տօնն է նաև U.O.S.S. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին և օրոայ պատարագէն վերջ կը կատարուի Հայրապետական Մաղթանք։

Յիշեցման կարգով յայտնենք նաև որ անուանակոչութեան տօնն է Գաղութիս երկարամեայ Առաջնորդ Գերաշնորհ Տէր Հայկազուն Արք.պս Նաձարեանի , ինչպէս նաև գաղութիս նշանակեայ նոր Առաջնորդ Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանին։

Տօնին ուրախ առիթով և Վարդանանցի ուխտով կը վերանորոգենք մեր պատկանելիութիւնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և մայր հայրենիքին, շնորհաւոպրելով Կաթողիկոսի անուանակոչութեան տօնը , ինչպէս նաև մեր ներկայ ու ապագայ Առաջնորդ սրբազան հայրերը՝ բոլորին մաղթելով քաջառողջութիւն, արեւշատութիւն և բեղուն գործունէութիւն։



Համա-Հայկական Հիմնադրամի Աւստրալիոյ Մասնաձիւղի Տարեկան Ձեռնարկը՝ Կիրակի 16 Փետրուար 2025 թուականին։ Հովանաւորութեամբ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տէր Հ. Արք.պս Նաձարեանի



Կիրակի 16 Փետրուարին նաև Սուրբ Սարգիսի Տօնն էր, ինչպէս միշտ առաւօտեան տեղի ունեցաւ սուրբ և անմահ պատարագ։ Սրբազանը Քարոզեց և անդրադարձաւ Սուրբ Սարգիսի մասին՝ ազգութիւն, գործունէութիւն , աւանդութիւն , նշանակութիւն և ապա հրաւիրուցան նորապսակները, խօսեցեալները , երիտասարդները և վերջապէս Սարգիս անունը կրող հայորդիները ինչպէս նաև Մարտիրոս կոչեցեալները, որոնք ըստ պատշաձի օրհնուեցան։

Եկեղեցական հայրերը և սարկաւագներ թափօրով եկեղեցւոյ բակ առաջնորդուեցան ուր յետ անդաստանի արարողութեան տեղի ունեցաւ խառոյկի հրկիզումը , տօնելու համար Տեառնընդառաջը . հայկական եկեղեցական սովորութեան համաձայն ցատկել կրակին վրայէն։ Ինչպէս ծանօթ է կրակը կը խորհրդանշէ մաքրութիւն և եղած է պաշտամունքի առարկայ՝աստուածային։ Ըստ դիցաբանութեան Ողիմպոսի աստուածներէն՝ Պրոմէթէոս կը գողնայ կրակը և զայն կը տրամադրէ հասարակ ժողովուրդին՝ մահկանացուներուն, որուն համար խստօրէն կը պատժուի Արամազդ Աստուծոյ կողմէ։ Միւս կողմէ ինչպէս յայտնի է քրիստոնէական մօտեցումով պատիժ է , ինչպէս դժոխքի կրակը։

Վերջին տարիներուն հայ ժողովուրդի վիճակը եղած է դժոխային, սակայն շնորհիւ Հիմնադրամին և Բարեսիրական հաստատութիւններու օժանդակութեան այդ ցաւերը գտած են մխիթարութիւն և սփոփանք և հիմնադրամի տարած աշխատանքը այդ ուղղութեամբ յայտնի է։

Ժամանակ մը առաջ, նոյն առիթով, ժամանած էր Մեւակ Ամրոեան Երգիչը։ Այն ժամանակ տակաւին Արցախը «Մերն» էր , բայց պայքարը սուր,և Ամրոեանի երգերէն մէկը կ՛ըսէր - «Կռիւ ենք գնում ախպերս ու ես» իսկ հիմա «կրակն ենք ընկել» և կորսնցուցած քուր ու ախպէր։

Օրուայ հրաւիրեալ երգչուհին Յասմիկ Բալասանեանն էր. Որ շատ հաւանաբար ծանօթ ըլլայ Հայաստանի կամ Երեւանի հասարակութեան , բայց աւելի քիչ մեզի՝ սփիւոքահայերուս։ Հիմնադրամի Յանձնախումբի ատենապետ Հայկ Լէփէձեան ներկայացուց Հիմնադրամի աշխատանքը և Հայաստանի մէջ տարած գործունէութիւնը , ինչպէս նաև 2024 թուականի տարեհաշիւը և հրաւիրեց երգչուհին որ ձոխացնէ երեկոն։ Երգացանկը սկսաւ մօր նուիրուած երգերով, շատ հաւանաբար ի մտի ունենալով նահատակ զինուորներուն մայրերը։ Երաժշտական առումով երթը դանդաղ էր, բայց կամաց, կամաց , աստիձանաբար սկսաւ աշխուժանալ և խանդավառուիլ ։ Պէտք է խոստովանիլ հակառակ Յասմիկ Բալասանեանի երաժշտական և ձայնային կարողութեան, որակին և հմտութեան սփիւռքի հայութեան նախընտրութեան մաս չի կազմէր։ Սփիւռքը կարօտ է և կր փնտռէ աւելի ազգային և հայրենասիրական երգացանկ։

Երեկոն տեղի ունեցաւ Ryde- EASTWOOD leagues club հանդիսասրահին մէջ, և ինչպէս կ`ակնկալուէր սրահը լեցուն էր հայրենաբաղձ և հայրենանուէր հայորդիներով։

Ատենապետին հրաւէրով Համահայկական Հիմնադրամի Յանձնախումբի ներկայացուցիչ անդամները սրբազան հօր հետ հրաւիրուեցան բեմ,ուր սրբազանին տրուեցաւ յուշանուէր ։ Սրբազանը իր խօսքին մէջ ընդգծեց, հակառակ որ կը բաժնուի գաղութէն , բայց Աւստրալիան պիտի մնայ միշտ իր սրտին մօտիկ և մայր հայրենիքէն պիտի հետեւի գաղութին, թելադրեց և քաջալերեց որ հիմնադրամը նոյն համերաշխութեամբ և համագործակցութեամբ շարունակել հիմնադրամի աշխատանքը գաղութէն ներս։ Եղան նուիրատուութիւններ։

Նուիրատուութիւններու շարքին ՀԲԸՄ.ի վարչութիւնը հիմնդրամին տրամադրեց 500 տոլար։ Յիշեցնենք նաև որ Պրն. Յովհաննէս Գույումձեան Բարեգործականի կողմէն Հիմնադրամի ներկայացուցիչն է։

Թող մեր հայրենիքը՝ Նայիրեան երկիրը չտեսնէ սուր ու կրակ այլ մանաւանդ սփիւռքի օժանդակութեամբ բարգաւաձի և ցաւն ու վիշտր ընդ միշտ հեռանան։



# ԱՄՆ Պետական Քարտուղար Մարքօ Ռուպիօ Երուսաղէմի Մէջ Այցելած Է Սուրբ Յարութեան Տաձար

Ամերիկայի Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Մարքօ Ռուպիօ Կիրակի օր՝ Փետրուար 16-ին, Երուսաղէմի մէջ այցելած է Սուրբ Յարութեան տաձար։ Այս մասին հաղորդած է Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը։

«Կիրակի, 16 Փէտրուար 2025-ի առաւօտուն, Ամերիկայի Միացեալ Նահանգներու պետական քարտուղար՝ տիար Մարքօ Ռուպիօ կատարեց իր առաջին պաշտօնական այցը Սուրբ Յարութեան ՏաՃար։

«Դիմաւորման արարողութեան Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ ներկայ էին դիւանապետ՝ հոգեշնորհ Տ. Աղան վարդապետ Գոգչեան եւ Սուրբ Յարութեան տաձարի նախկին տեսուչ՝ հոգեշնորհ Տ. Սամուէլ ծ. վարդապետ Աղոյեան»,- ըսուած է պատրիարքութեան ֆէյսպուքեան գրառման մէջ։



### ԱՄՆ-ի «Հայաստան» Հիմնադրամը \$250,000 Կրթաթոշակային Նպաստ կր

ԱՄն» Համահայկական Հիմնադրամի միջազգային ցանցին, 250,000 ամերիկեան տոլար կրթաթոշակային նպաստ կը տրամադրէ հայկական դպրոցներու այն ուսանողներուն, որոնց ընտանիքները տուժած են Հարաւային Քալիֆորնիոյ անտառային հրդեհներէն։

Այս ծրագիրին նպատակն է օժանդակել հրդեհներու պատՃառով իրենց տուները կորսնցուցած եւ ֆինանսական դժուարութիւններու դիմաց գտնուող ընտանիքներուն, որպէսզի անոնց երեխաները կարենան շարունակել յաՃախել հայկական դպրոցներ։

Միջոցները առաւել կարիքաւորներուն հասցնելու համար՝ Հիմնադրամը անմիջական համագործակցութիւն կը հաստատէ տեղի հայկական դպրոցներուն հետ՝ ապահովելով օժանդակութեան նպատակային եւ արդիւնաւէտ բաշխումը տուժած ընտանիքներու միջեւ։

«Այս ձգնաժամը լուրջ ազդեցութիւն ձգած է մեր համայնքներուն վրայ, ուստի մեր նպատակն է ուսման վարձքի աջակցութեամբ մեղմացնել ընտանիքներու ֆինանսական բեռը եւ հնարաւորութիւն ընձեռել ուսանողներուն՝ առանց ընդհատման շարունակելու իրենց կրթութիւնը», – նշած է ԱՄՆ «Հայաստան» հիմնադրամի ատենապետ Մարիա Մեհրանեանը։

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ԱՄՆ տեղական մարմինը մեծ ջանք կը թափէ, որպէսզի ուսման վարձքի աջակցութիւնը հասնի շահառուներուն, եւ միջոցները բաշխուին առաւել արդիւնաւէտ կերպով։ Հիմնադրամը յանձնառու կը մնայ համայնքին աջակցելու իր առաքելութեան՝ շարունակելով հետեւիլ իրադարձութիւններուն, որպէսզի հրդեհներէն տուժած երեխաները ստանան իրենց անհրաժեշտ օժանդակութիւնը։

# Մանկագիր Ալին Պզտիկեան-Շիրաձեան կը Ստեղծէ Սեղանի Խաղ մը Հայրենի Լեռներու եւ Գետերու Հետ

«Հայրենի Լեռներ եւ Գետեր» անունով սեղանի խաղ մը պատրաստուած՝ մանկագիր եւ դաստիարակ Ալին Պզտիկեան-Շիրաձեանին կողմէ։

Այս խաղը կը յիշեցնէ ժամանակին կոչուած «օձի խաղը,» որ յետագային կոչուած է նաեւ «Սահնակներ եւ Աստիձաններ,» ուր խաղացողները կը բարձրանան աստիձաններով, վար կիջնեն սահնակներով, եւ որ ծնունդ առած է Ք.Ա. 2000 թուականներուն Հնդկաստանի մէջ։

Մակայն «Հայրենի Լեռներ եւ Գետեր» խաղը հայկական իր կնիքը ունի, որովհետեւ հոն խաղացողները կը յառաջանան բարձր թիւեր հայկական լեռներով մինչեւ հասնին Արարատ լեռ։ Իսկ կիջնեն վար կամ նուազ թիւեր հայկական գետերով։ Բացի խաղի հիմնական կանոններուն, երբ Հայաստանի տեսարժան վայրի մը վրայ խաղաքարը հասնի, խաղացողը կը ստանայ 1 յաւելեալ առիթ խաղայու եւ աւելի եւս յառաջանալու կամ յետադարձելու։

Այս խաղին մէջ ընդգրկուած տեսարժան վայրերն են կասկադ Համալիրը, Մայր Հայաստանի, Մեսրոպ Մաշտոցի, Հայկ Նահապետի, Սասունցի Դաւիթի արձանները, Ս. Էջմիածինի Մայր Տաձարը, Ծիծեռնակաբերդի եւ Սարդարապատի Յուշահամալիրները, Այբուբենի Պուրակը եւ Սեւանայ Լիձը։

Օգտագործուած լեռներն են՝ Արարատ, Արագած, Արա, Խուստուփ, Հատիս, Վարդենիս, Գեղամայ լեռնաշղթայ-Աժտահակ, Ծաղկունեաց-թեղենիս, Սիւնեաց լեռնաշղթայ-կապուտջուդ։

Օգտագործուած գետերն են՝ Ձորագետ, Բամպակ, Քասախ, Արփա, Որոտան, Հրազդան, Դեպեդ, Արաքս, Ախուրեան։ Յաղթական կը համարուի ան, որ առաջին անգամ կը հասնի Արարատ լեռ 100րդ քառակուսիին վրալ։

Խաղի տուփը ունի նաեւ դաստիարակչական երկլեցու բաժին մը, որ կը փոխանցէ , այլ նաեւ հետաքրքրութիւն կր ստեղծէ հայաստանի աշխարհագրութեան եւ իր գեղատեսիլ բնութեան հանդէպ այս խաղը ոչ միայն հաձելի ժամանց կր պարգեւէ մասնակիցներուն կաղանդի եւ նոր տարուան նուէրներու ցանկին» կաւելցնէ ան։

Գծագրութիւնները համագործակցութեան արդիւնքն են հայաստանաբնակ գծագրական կերպարուեստի մասնագէտ՝ Քրիստ Պետոլեանին հետ, որ նաեւ նկարազարդած է «Լորին եւ նարեկը» մատենաշարի վերջին 4 գիրքերը։ Այս մատենաշարի առաջին գիրքը՝ «Լորիկը եւ Ծիլիկը» Ալին Պզտիկեան-Շիրաձեանը հրատարակած է 25 տարիներ առաջ։ Ան երկար տարիներէ ի վեր կր պաշտօնավարէ Շ. եւ Է. Մերտինեան Վարժարանէն ներս դասաւանդելով

Հայերէն լեզու, մշակոյթ

թատրոն։

Խաղր կարելի է ձեռք ձգել Սարդարապատ գրախանութներէն կամ կապուելով հեղինակին հետ էլ huugtni alinehekiat@yahoo.com.







15 Umpun, March -2025

# Օսկանեան՝ Մեղրիէն Մինչեւ Ուաշինկթըն

Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութիւնը գաղտնազերծած է փաստաթուղթեր, որոնք կը վկայեն, թէ 90-ականներու վերջերուն Ռոպերթ Քոչարեանն ու Հէյտար Ալիեւը գլուխ-գլխի հանդիպումներու ընթացքին համաձայնութեան եկած են լուծելու Ղարաբաղեան խնդիրը տարածքներու փոխանակմամբ՛ Մեղրին Ղարաբաղի դիմաց սկզբունքով։

Անցնող տասնամեակներուն այս հարցը եղած է Հայաստանի ներքին քաղաքական կեանքէն ներս ամենէն աւելի արծարծուած հարցերէն մէկը, սակայն այդպէս ալ մնալով օդին մէջ կախուած՝ առանց յստակեցման։

Այդ օրերուն գլխաւոր դերակատարները հանդիսացող Ռոպերթ Քոչարեանը ու անոր կողքին կանգնած՝ արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանը միշտ ալ հերքած են նման ծրագիրի մը գոյութիւնը, որուն իրականացումը պիտի նշանակէր ընդունիլ Ղարաբաղի ԱտրպէյՃանին պատկանելութիւնը, իսկ Մեղրիի հետ փոխանակումը պիտի փակէր կապը Իրանի հետ« այդպիսով աւելի սեղմելով Հայաստանի շուրջ շրջափակումը։

Այս նոր բացայայտումները մեծ ուշադրութեան պիտի չարժանանային, եթէ նախկին երկու նախագահները տարիներ շարունակ Արցախի Հարցը չօգտագործէին իրենց քաղաքական նպատակներուն համար, իսկ հիմա կը շահագործեն՝ իշխանութեան վերադառնալու համար։Այս արկածախնդրական ծրագրի գլխաւոր դերակատարներէն մին՝ Վարդան Օսկանեան կը շարունակէ մեղադրել ներկայ իշխանութիւնները՝ Արցախի կորուստին համար, անտեսելով կամ մոռացութեան տալով ի՛ր պատասխանատութիւնը դէպքերու նման զարգացման մէջ։

Փոխանակ գաղտնազերծուած փաստաթուղթերու մասին խօսելու Օսկանեան ինքզինքին իրաւունք տուած է կոչ յղելու Ամերիկահայութեան՝ չհանդիպելու Ուաշինկթըն այցելող վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ։ Իր կոչը հիմնաւորելու համար Օսկանեան կ՛ըսէ. «Փաշինեանի ձախողած առաջնորդութեամբ Հայ ժողովուրդը կը բոլորէ իր նորագոյն պատմութեան իր ամենէն աղետալի շրջանը... Հայաստան կրեց զինուորական պարտութիւն եւ ունեցաւ հողային կորուստներ... Փաշինեանի վարկանիշը հասած է 10 տոկոսի... ժողովրդավարութիւնը նահանջի մէջ է... Փաշինեան կը խանգարէ Արցախցիներու վերադարձը իրենց բնակավայրերը եւ գերիներու ազատ արձակումը»։

Ըստ Օսկանեանի, իր այս բոլոր մեղքերուն համար Ամերիկահայ կազմակերպութիւնները պէտք է պոյքոթի ենթարկեն Փաշինեանի այցը Միացեալ Նահանգներ։ Նախ սկսինք Փաշինեանի վայելած ժողովրդականութենէն։ Եթէ նոյնիսկ պահ մը ընդունինք, որ այդ նշուած տոկոսները Ճիշդ են, Փաշինեանի ժողովրդականութիւնը կը շարուակէ մնալ 10 անգամ աւելի բարձր՝ քան իր գլխաւոր հակառակորդները հանդիսացող՝ Ռոպերթ Քոչարեանի եւ Սերժ Սարգիսեանի վարկանիշը, որ 1 տոկոսի սահմաններուն վրայ է։

Ինչ կը վերաբերի Արցախի կորուստին, այս վերջին փաստաթուղթերը անգամ մը եւս կու գան հաստատելու, որ անոր հիմքերը դրուած էին տակաւին տարիներ առաջ։ Իսկ, Գալով պատերազմի դաշտին վրայ կրած պարտութեան, Փաշինեան առաջին օրէն ընդուած է պատասխանատուութեան ի՛ր բաժինը, սակայն գլխաւոր պատասխանատուները կը մնան Քոչարեանն ու Սարգսեանը, որոնք ամբողջութեամբ անտեսած էին բանակը արդիական զէնքերով օժտելու անհրաժեշտութիւնը, այն օրերուն երբ Ատրպէյձան արագօրէն կը զինուէր ու կը պատրաստուէր պատերազմի։ Այս անտեսումին գլխաւոր պատձառը այն էր, որ պետական գանձի կողոպուտը առիթ չէր տար բանակի հզօրացման համար գումար լատկացնելու։

16

Ինչ կը վերաբերի ժողովրդավարութեան նահանջին, Վարդան Օսկանեան վերջին անձն է, որ իրաւունք ունի ժողովրդավարութեան մասին խօսելու։ Ան տասը տարի ծառայեց նախագահի մը, որուն ժամանակ տեղի ունեցան 39 քաղաքական սպանութիւններ, փակուեցան անկախ լրատուամիջոցներ, բանտերը լեցուեցան քաղաքական բանտարկեալներով ու միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւններուն կողմէ Հայաստան դասուեցաւ «ոչ ազատ» երկիրներու շարքին։

Ամերիկահայ կազմակերպութիւններու մեծամասնութիւնը Օսկանեանի կոչը արժանացուցին անտեսումի ու իր քաղաքական, բարեգործական, եկեղեցական ու հասարակական միաւորներով ներկայ գտնուեցան Վարչապետի հետ հանդիպումին՝ բարձր պահելով Հայաստանի պետականութեան վարկը։ Արդար ըլլալու համար յայտնենք, որ ՀՀ դեսպանատան առջեւ հինգ երիտասարդներ կը բողոքէին Փաշինեանի այցելութեան դէմ։

Այս վերջին գաղտնազերծումներու լոյսին տակ, Ժամանակն է, որ Վարդան Օսկանեանն ու իր ղեկավար՝ Ռոպերթ Քոչարեանը հեռանան քաղաքական ասպարէզէն, բայց նախ քան այդ ընդունին, որ Մեղրին Ղարաբաղի հետ Փոխանակելու հարցը իրենց համար եղած է ընդունելի տարբերակ։


ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ «Մասիս»



ՀԲԸՄ.ի Սիտնիի մասնաժողովը, շնորհակալութեամբ ստացած է Փըրթաբնակ մեր հայորդիներէն և «Միութիւն» ամսաթերթի բաժանորդ Տիար Ցոլակ Ապտալեանէն, Աշոտ Հայկազուն Գրիգորեանի հեղինակութեամբ «Հայ Քրիստոնէական Հարտարապետութիւնը և Նախաքրիստոնէական Մշակոյթի Ներգործութիւնը» գիրքը

Հրատարակութիւն ՀԲԸՄ.ի Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադրամի։ 2023 թ. ´440 էջ

ՀԲԸՄ.ի վարչութիւնը զայն սիրով կը փոխանցէ ՀԲԸՄ.ի Ալեքսանտր Վարժարանի նորաշէն գրադարանին, որպէս գանձարան։



# Գերմանիա Պիտի Շարունակէ Աջակցիլ Հայաստանի՝ Խաղաղութեան Հաստատման Ուղղուած Քայլերուն. Հանդիպած Են Փաշինեան Եւ Շոլց

Միւնիխիի Անվտանգութեան համաժողովի շրջանակին մէջ վարչապետ Նիկոլ Փաշինեան հանդիպում ունեցած է Դաշնային վարչապետ Օլաֆ Շոլցի հետ։

Վարչապետ Փաշինեան առողջութիւն մաղթած է Միւնիխի մէջ օրերս տեղի ունեցած միջադէպէն տուժածներուն։

Հանդիպման ընթացքին կողմերը քննարկած են Հայաստան-Գերմանիա երկկողմ յարաբերութիւններուն օրակարգը եւ բազմոլորտ համագործակցութեան խորացման հեռանկարները։ Վարչապետ Փաշինեան կարեւորած է երկկողմ կապերու ընդլայնումն ու առեւտրատնտեսական կապերու աշխուժացումը։

Զրուցակիցները անդրադարձած են նաեւ տարածաշրջանային անվտանգութեան ու կայունութեան հարցերուն։

Վարչապետ Փաշինեան ներկայացուցած է Հայաստանի կառավարութեան՝ տարածաշրջանին մէջ խաղաղութեան հաստատման ուղղուած ջանքերը, այդ ծիրին մէջ մանրամասնութիւններ հաղորդած է «Խաղաղութեան Խաչմերուկ» նախաձեռնութեան՝ հիմնուած ինքնիշխանութեան, իրաւազօրությեան, հաւասարութեան եւ փոխադարձութեան սկզբունքների հիման վրայ, ինչպէս նաեւ Հայաստան-Ատրպէյձան խաղաղութեան գործընթացի զարգացումներուն մասին։

Վարչապետ Շոլց իր հերթին նշած է, որ Գերմանիա պատրաստ է շարունակելու աջակցիլ

Հայաստանի ժողովրդավարական բարեփոխումներու օրակարգին, ինչպէս նաեւ խաղաղութեան հաստատման ուղղուած քայլերուն։

Հանդիպման աւարտին կողմերը վերահաստատած են փոխգործակցութեան խորացման պատրաստակամութիւնը եւ կարեւորած են երկկողմ քաղաքական երկխօսութեան

շարունակականութիւնը։



# US-RUSSIA MEETING ON UKRAINE WAR

The meeting between senior U.S. and Russian officials to discuss a possible agreement on ending the war in Ukraine and prepare for a Trump-Putin summit will take place in Saudi Arabia, Axios reported citing two sources with direct knowledge.

The meeting will follow last week's phone call between U.S. President Donald Trump and Russian President Vladimir Putin.

Ukraine has said it hasn't received an invitation for the meeting, but Trump earlier said Kyiv would be involved in the talks.



# Pope Remains in Hospital to treat complex clinical condition: Vatican

Pope Francis is being treated for a "complex clinical situation" and will remain in hospital for as long as necessary, the Vativcan said.

According to BBC, the 88-year-old was admitted to Rome's Gemelli hospital on Friday to undergo treatment and tests for bronchitis.

In an update on Monday, the Vatican said the pontiff has a "polymicrobial infection" of his respiratory tract, which has required a change in his treatment.

Before his admission last week, the Pope had bronchitis symptoms for several days and had delegated officials to read prepared speeches at events.



# Հայկական ասացուածքներ Սիրոյ՝ Հիւրընկալութեան և Յաւերժութեան մասին

Բոլոր մշակոյթներու մէջ , այդ թվին նաև հայկականին, ասացուածքները կը զայրանան, կը տխրին, կը ծիծաղին, կը վախցնեն, կը զգուշացնեն, մէկ խօսքով կ՛արտացոլան ժողովրդական զգացումներու ողջ գունապնակը։

Ասացուծքներ կան բոլոր լեզուներուն մէջ, որոնք հազարաւոր տարիներ շարունակ փոխանցուած են հին սերունդներէն՝ նորերուն։

Հայկական հարուստ մշակոյթը՝ ասացուածքներու և մէջբերումներու հսկայական ժառանգութիւն ունի, որոնք կ՛արտացոլան ժողովուրդի փիլիսոփայութիւնը։ Դարեր շարունակ օգտագործուած արտահայտութիւնները կեանքի կարևոր դասեր կու տան։ Օրինակներ տրամադրուած են հայկական ասացուածքներու տարբեր թեմաներով։ Կենցաղային ասացուածքներ

Եօթ դուռ զարկ,որ մէկը բացուի — Շատ իմացիր , բայց քիչ խօսիր։

Այն ինչ չի ծնիր, չի մահանար — Մեւր ձերմակ չի դառնար։

Զայրացած մարդը շուտ կը ծերանայ — Որու հետ որ շփուիս նոյնը կը դառնաս։ Հիւրընկալութիւն

Հիւրերուն հետ ուրախութիւնը երկու անգամ է , երբ կու գան , յետոյ երբ կ՛երթան։ Միրոյ Մասին

Համեստ աղջիկը աւելի արժեքաւոր է։ —Նետուած քարը ետ չի վերադառնար։

Գառնուկը Գայլին չեն վստահիր — Միրով եղած վէրքը կը բուժուի, բայց լեզուովը՝ ոչ

Աղջիկը աւելի լաւ է տալ տեղացի հովիւին քան օտար թագաւորին։

Մնունդի Մասին

Ոչ մէկ ուրիշի հացին կարագ չի քսէր — Ստամոքսր Լեցուն է , բայց աչքր ծակ։

Այն ինչ լեցնես պնակիդ մէջ , կր գտնես դգալիդ մէջ։

Խօսքով փիլաւ չեփուիր, իւղ ու բրինձ է պէտք։

Ուրիշին Ծառր կր ջրէ , բայց իր ծառր անխնամ է։

Եթէ ծառին տակ պառկիս , տանձը բերանդ չիյնար։

Էշր ի՞նչ իմանալ նուշը ի՞նչ է ։

# ՀԲԸՄ.ի Կազմակերպած դասախօսական երեկոյ , նուիրուած Երուսաղէմի հայկական թաղամասին և յարակից դատական հարցերուն ի մասնաւորի «Կովերու Պարտէզ» հողատարածքին հետ կապուած Դասախօս՝ Պրն Յակոբ Ճըրնազեան

Ուրբաթ 21 Փետրուարի երեկոյան ՀԲԸՄ.ի կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցաւ հետաքրքիր դասախօսական երեկոյ։ Դասախօսն էր Երուսաղեմէն հիւրաբար քաղաքս գտնուող Պրն. Յակոբ Ճըրնազեան , որ Մեդրակ Պալեանի հետ համատեղ հիմնադիրն է SAQ– ին (Save Armenian Quarter) Ազատել Հայկական Թաղամասը շարժումին։

Բնականաբար սրահը լեցուցած էր Երուսաղէմահայերով, որոնք ծանօթ էին երիտասարդին և գաղութապատկան այլ անդամներով։

Բարի գալուստի և բացման խօսքերով հանդէս եկաւ Միութեան Քարտուղար Տիկին Քրիստին Աբիկեան , որ հանրութեան ներկայացուց հիւրը և ապա զինք հրաւիրեց ներկայացնելու բոլորիս հետաքրքրող այս Երուսաղէմի հանգոյցը, որ բաւական երկար ժամանակէ ի վեր գրաւած է մեր ուշադրութիւնը հետեւողական կերպով։

Դասախօսութեան գլխաւոր նիւթն էր «Երուսաղէմի հայկական հողատարածքները և անոնց վտանգը» Դասախօսը հազիւ սկսաւ նիւթին անցնիլ, յայտնի դարձաւ որ քաջատեղեակ է անց ու դարձին և պատմութեան։

Անգլերէն լեզուով սալիկներու ցուցադրութեամբ դասախօսը անդրադարձաւ պատմութեան գլորւող անիւին մէջբերելով Օսմանեան շրջանէն մինչեւ անգլիական իշխանութիւնը դէպքեր ու դէմքեր ։ Օմար Խալիֆան , Սալահ Էլ տին, Մամլուքներ։Թէ ինչպէս Աբրահամեան պատրիարք գացած է մինչեւ Մեքքա և ստացած հրովարտակ , որ առաւել ևս հայոց վարկը բարձրացուցած է սրբավայրերու տարածքին և հայը, հայութիւնը արժանացած յարգանքի ու գնահատանքի։ Յիշատակելի էր Գրիգոր Շղթայակիր (1670 -1749) պատրիարքի շրջագայութիւնը ապահովելու համար պատրիարքութեան ֆինանսական մտահոգութիւնները։

Օսմանեան շրջանին կը զարգանայ լուսանկարչութիւնը և տպագրութիւն։ 1920 թուականէն ասդին Երուսաղէմ կը դառնայ Հայ մշակոյթի, դպրութեան, հոգեւոր—կրօնական դաստիարակութեան կետրոն, ինչպէս նաև առեւտրական կապի՝ արեւմուտքի և դրացի երկիրներու հետ։

Այսօր բնական է պատկերը նոյնը չէ նուազած է գաղութը որ մօտաւորապէս կը հաշուէ 1500 հոգի, իսկ դպրեվանքի աշակերտութեան թիւը կը հասնի 170-ի ,որոնցմէ միայն 140-ը հայեր են։

Ներկայիս Պատրիարքութիւնը , թէև նիւթական մտահոգութիւններ չունի, բայց հարց կը ծագի թէ ինչպէս առաջացան այս դատական հարցերը, որ այսօր սեւ ամպեր են և փոթորիկ կանխատեսող։

Իր Օրին Անդրէաս Պատրիարք սկսած է գնել Պատկան կալուածները։ ահաւասիկ համայնքը և պատրիարքութիւն 1500 և աւելի տարիներէ ի վեր կը գոյատեւէ։

Անդրադարձաւ ներքին դատական խրթին հարցերուն , պատրիարքութեան և ժողովուրդին միջև եղած տարբերութիւններուն և ստորագրեալ պայմանագիրներու օրինակնութեան։ Շեշտեց որ ունին երկու փաստաբանական գրասենեակներ՝ Ամերիկա , որ կ՛աշխատի ցրիաբար իսկ երկրորդը՝ տեղական։ Դատերը կը շարունակուին։ Նշեց որ որևէ հողի կորուստ մեծ վտանգ կը սպառնայ գաղութին, բայց հաւաստիացուց որ քանի կայ յոյս թէկուզ մէկ տոկոս պիտի շարունակեն պայքարը։

Ծափահարութիւններով փակուեցաւ դասախօսութիւնը ,որուն յաջորդեց հարց ու պատասխանի բաժին մը և խմբային լուսանկար։ Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով՝Վարձքդ կատար Յակոբ Ճան։

Մեր՝ «Միութիւն» ամսաթերթի կողմէն յիշեցնենք, որ նոյն շրջանին 19
Փետրուարին Թուրքիոյ մէջ Սանլիուրֆա , հայկական Ուրֆա տարածքին
վաձառուած է եկեղեցի և հողատարածք։ Չենք ուզեր շահարկել , բայց արդե՞օք
կայ ներքին քաղաքական լռելեան համաձայնութիւն Իսրայէլի և Թուրքիոյ
միջեւ կրկնակի հարուած հասցնելու հայութեան և հայ ժառանքութեան։ Կր
յուսանք որ պարագան նոյնը չի մատնանշէր։

Դասախօսը ելոյթի պահուն ՀԲԸՄ.ի սրահէն ներս։ Անգլերէնով յաւելեալ տեղեկութիւններ էջ 40 և 41

20 Մարտ,March -2025



# Գրաւուած թուականներ -- Save the Dates

Այս տարի մեծ շուքով կը նշուի ՀԲԸՄ.ի Ալեքսանտր Վարժարանի 35 ամեակը Դպրոցը,անկասկած կը հանդիսանայ գաղութի հզօրացման և ապահովութեան կարեւոր սիւներէն մէկր

Միրելի հայրենակիցներ , այս ուրախ և պատմական առիթին բերումով կը ծրագրուին հանդիսութիւններ, որոնց մասին կը փափաքինք ձեզի տեղեկացնել, որ ձեր կարգին կարողանաք թուականները արձանագրել ձեր օրացոյցներուն վրայ կամ յուշատետրին մէջ և բերել ձեր մասնակցութիւնը և քաջալերանքը, նկատի ունենալով որ կրթութիւնը, մանաւանդ հայեցի կրթութիւնը և հայկական մշակոյթի և ժառանգութեան պահպանումը, մեր գաղութի առաջադրանքներէն մէկն է և դպրոցի սրբազան առաքելութիւնը։ Թուականներ , Dates

Կիրակի, 7 Մեպտեմբեր 2025 –Sunday 7 September Պաշտօնական հանդէս, Official Concert վայր, venue The Concourse Hall, Chatswood

Գաղութի բոլոր անդամները հրաւիրուած են։ Մուտքը ազատ է։ All members of the community are welcome , Free Entry

Շաբաթ, 8 Նոյեմբեր 2025 – Պարահանդէս, Saturday 8 November 2025 ,Dinner Dance EDEN Venue , Edensor Park, Ednesor NSW

Հանդիսութիւններու մասին հանրութեան, աւելի ուշ, պիտի փոխանցուին յաւելեալ տեղեկութիւններ։

This year will be celebrating the 35th Alexander School anniversary of the AGBU with great pomp School, with no doubt is considered one of the empowering pillars of the community.

Dear compatriots, on this solemn and historical occasion celebrations will take place.

We would like to inform you about the upcoming events, so you can mark them in your calendar or diary and bring your valuable participation and encouragement, taking in consideration that education and especially the preservation of the Armenian culture, language, heritage is paramount for the survival and the continuity of our community.

Further details about the events will be available to the public, in due time.

ՀԲԸՄ.ի Ալեքսանտր Վարժարանի Հոգաբարձութիւն AGBU Alexander School BoardCommitee

N.B. On this occasion a commemorative book will be prepared and published, Where you can express your sentiments and congratulatory wishes

Full Page \$1100 Half Page \$550

Quarter Page \$ 300

Please note for any transfer or donations you can use the school bank account WESTPAC—AGBU Alexander School

BSB —032-000 A/C N0. 12-0172



A.G.B.U. Alexander Primary School

# EXANDER N

**Վ.**Ք.Ը.Մ. Ալեքսան**տր Վարժարա**ն



**22** 9486 3266



www.alexander.nsw.edu.au



**9486 3204** 





# ՀԲԸՄ Ալեքսանտր Վարժարան AGBU Alexander Primary School

#### «Celebrating 35 Years of Academic Excelence xcellence»

This year marks a significant milestone in the history of AGBU Alexander Primary School as we "Celebrate 35 Years of Academic Excellence". This theme embodies the remarkable journey of growth, achievement, and dedication that has shaped our beloved school.

We give thanks to God and Our Lord Jesus Christ for guiding and blessing us throughout these 35 years

#### Honouring the past

As we reflect on our history, we honour the vision of our founders, the challenges we have overcome, and the milestones we have achieved. Our journey is a testament to the dedication and perseverance of our educators, students, and the entire school community who have played an

integral role in shaping our educational institution's identity.

#### Showcasing the Present

Today, we stand proud of our continued commitment to excellence. Our school thrives with academic achievements, new and modern infrastructure, and outstanding extracurricular programs. We remain dedicated to fostering a nurturing learning environment that encourages curiosity, creativity, and character development.



### Inspiring The Future

As we look ahead, we renew our dedication to advancing knowledge, embracing innovation, and preparing our students for the challenges of tomorrow. Our goal is to inspire future generations to reach new heights while staying true to our core values and Armenian heritage.

### **Building Community Connections**

Academic excellence is a collective effort, and we are grateful for the unwavering support of our families, organisations, and the wider community. Together, we continue to build strong partnerships that enrich our students' educational experience and contribute to the success of our school.

By celebrating our past, embracing our present, and inspiring the future, we reinforce our school's legacy of excellence, pride, and aspiration.

Thank you for being part of this incredible journey. Let us continue to grow and achieve together.

Mr Manoug Demirjian Principal

# ON THE OCCASION OF VALENTIN'S DAY

# Meet the 8 Different Types of Love

#### Philia— Affectionate Love

**Philia** is love without romantic attraction and occurs between friends or family members. It occurs when both people share the same values and respect each other — it's commonly referred to as "brotherly love."

**Love Catalyst:** The mind

Your mind articulates which friends are on the same wavelength as you and who you can trust.

#### **How to Show Philia:**

Engage in deep conversation with a friend. —BE open and trustworthy. — Be supportive in hard times.

#### PRAGMA— Enduring Love

Pragma is a unique bonded love that matures over many years. It's an everlasting love between a couple that chooses to put equal effort into their relationship. Commitment and dedication are required to reach "Pragma." Instead of "falling in love," you are "standing in love" with the partner you want by your side indefinitely.



PHILIA

AFFECTIONATE LOVE A love that runs deep

in true friendships

LOVE CATALYST Mind

WAYS TO SHOW THIS LOVE Exchange your beliefs and imperfections

with close friends.

#### Love Catalyst: Etheric (Subconscious)

The subconscious drives partners towards each other. This feeling comes unknowingly and feels purposeful.

**How to Show Pragma:** — Continue to strengthen the bond of long-term relationship. Seek and show effort with your partner. — Choose to work with your partner forever.

### Storge — Familiar Love

**Storge** is a naturally occurring love rooted in parents and children, as well as best friends. It's an infinite love built naturally upon acceptance and deep emotional connection. This love comes easily and immediately in parent and child relationships.

Love Catalyst: Causal (Memories)

Your memories encourage long-lasting bonds with an-

other individual. As you create more memories, the value of your relationship increases.

#### How to Show Storge:

Sacrifice your time, self or personal pleasures. — Quickly forgive harmful actions. Share memorable and impactful moments.

24

STORGE-

Flows between parents and children or

LOVE CATALYST Memories

WAYS TO SHOW THIS LOVE Show gratitude towards the people close to you

FAMILIAR LOVE

#### **Eros** — Romantic Love

Eros is a primal love that comes as a natural instinct for most people. It's a passionate love displayed through physical affection. These romantic behaviors include, but are not limited to, kissing, hugging and holding hands. This love is a desire for another person's physical body.

Love Catalyst: Physical body (Hormones)

Your hormones awaken a fire in your body and

must be satiated with romantic actions from an admired partner.

How to Show Eros: —Admiring someone's physical body. Physical touch, as hugging and kissing.

Romantic affection.

### **Ludus** — Playful Love

**Ludus** is a child-like and flirtatious love commonly found in the beginning stages of a relationship (a.k.a. the honeymoon stage). This type of love consists of teasing, playful motives and laughter between two people. Although common in young couples, older couples who strive for this love find a more rewarding relationship.

Love Catalyst: Astral (Emotion)

Your emotions allow you to feel giddy, excited, interested and involved with another person.

#### How to Show Ludus:

